ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՑԱԽԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
ՎԵՐԱՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԱՐԴԱՐ ՊԱՀԱՆՋԸ 70
ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻ
ԱՆՆԱԽԱԴԵՊ ԽԹԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑԱՎ

ԱՐՑԱԽԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ



ՂԱՐԱԲԱՂԻՆԵՐԻ ԿՈՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Հակառակ ՍՍՀՄ Գերագույն խորհրդի ս.թ. հուլիսի 18-ի որոշմամբ խոստացված երաշխիքների, Լեռնային Ղարաբաղի դրությունը ոչ միայն չի բարելավվում, այլև ավելի ու ավելի վատթարանում է: Ադրբեջանական իշխանությունները ձգտում են Արցախը լցնել ադրբեջանցի նորաբնակներով, Բաքվից շարունակ հանձնաժողովներ են ուղարկվում Արցախ՝ միջամտելու նրա ներքին գործերին: Իրավապահան մարմիններում, մանավանդ դատախազությունում տնօրինում են օտարազգի պաշտոնյաներ, որոնք հալածանքներ են սկսել Ղարաբաղյան շարժման ակտիվիստների նկատմամբ:

Այդ պատճառով ս.թ. սեպտեմբերի 12-ից Լեռնային Ղարաբաղում հայտարարվել է մեկշաբաթյա համընդհանուր գործադուլ հետևյալ պահանջներով՝

1. Մարզը անհապաղ դուրս բերել Ադրբեջանի կազմից:
2. Անհապաղ Արցախից վտարել այսպես կոչված ադրբեջանցի փախստականներին:
3. Դադարեցնել Բաքվից ուղարկվող հանձնաժողովների աշխատանքը:
4. Դադարեցնել հալածանքները շարժման ակտիվիստների նկատմամբ:

Մենք երախտագիտությամբ արձանագրում ենք, որ մեր ձեռք բերած բոլոր նվաճումները և մեր պայքարի վերջնական հաղթանակը պայմանավորված են մայր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի մշտական բարոյաքաղաքական օգնությամբ, որը զգացել ենք մեր պայքարի յոթ ամիսների ընթացքում: Ուստի Ձեզ կոչ ենք անում այս անգամ ևս սատար կանգնել մեզ և վճռական գործողություններով համերաշխություն հայտնել Արցախի աշխատավորության ընթացիկ գործադուլի պահանջներին: Միայն միասնական պայքարով մենք կհասնենք մեր իդեալների իրականացմանը:

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1988թ.